



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

30.04.2015 N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ջերմորեն շնորհավորում եմ Աշխատանքի օրվա կապակցությամբ և ցանկանում, որ աշխատանքային հաջողությունները, ձեռքբերումներն ու դրական զարգացումները լինեն աշխատող մարդու ամենօրյա ուղեկիցները:

Տոնական այս օրվա առիթով դարձյալ պետք է ընդգծենք աշխատանքի կարևորություններն ու գերակայությունները և ցանկանանք, որ աշխատող և արարող հայ մարդու ինքնատիպ նկարագիրը մշտապես ուղեկցի մեր ժողովրդին:

Մայիսի մեկը բոլոր ժամանակներում պահպանել և պահպանում է իր նշանակալի խորհուրդն ու աշխատողին արժանիորեն մեծարելու լավագույն հնարավորություն ընձեռում:

Դարձյալ շնորհավորում եմ Աշխատանքի օրվա առթիվ և մաղթում ամենայն բարիք:

Հարգանքներով

Կ. ԳՈՒՂՈՅԱՆ